ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության և պարենի նախարարության միջև ագրոարդյունաբերական համալիրի բնագավառում տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության և պարենի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

նկատի ունենալով երկու երկրներում շուկայական հարաբերությունների հիմքի վրա ընթացող տնտեսական բարեփոխումների պայմաններում ագրոարդյունաբերական համալիրում փոխշահավետ համագործակցություն զարգացնելու և խորացնելու ձգտումը,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պատմականորեն ձևավորված տնտեսական և գիտատեխնիկական կապերը,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին 1997 թվականի օգոստոսի 28-ի Պայմանագրով, ինչպես նաև ԱՊՀ երկրների կառավարությունների կողմից ագրոարդյունաբերական համալիրին վերաբերող հարցերի միջպետական փոխհարաբերությունների մասին 1993 թվականի մարտի 29-ի Համաձայնագրով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կիրականացնեն համագործակցություն վստահության, հավասարության և փոխշահավետության հիման վրա՝ համաձայն Կողմերի պետությունների ներքին օրենսդրության:

Կողմերը կխրախուսեն պետական և սեփականության այլ ձևերի ու ենթակայության կազմակերպությունների միջև ուղղակի կապերի զարգացումը, բոլոր մակարդակներով անհրաժեշտ աջակցություն և օգնություն կցուցաբերեն փոխադարձ համագործակցության կոնկրետ մասնակիցներին:

Հոդված 2

Փոխադարձ համագործակցությունը կիրականացվի հետևյալ հիմնական ուղղություններով.

1) բուսաբուծություն, այդ թվում՝ գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծություն,

2) անասնապահություն, այդ թվում՝ տոհմային գործ,

3) գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և ավտոմատացում, այդ թվում՝ երկու երկրների ագրոարդյունաբերական համալիրի բնագավառում գյուղատնտեսական մեքենաների առանձին տեսակների յուրացում և ներդրում, տեխնիկական սպասարկումների կատարելագործում և գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգման բազայի զարգացում,

4) սննդի և վերամշակման ճյուղեր, այդ թվում՝ սննդամթերքի արտադրության և վերամշակման ձեռնարկությունների արդիականացում,

5) տնտեսվարման նոր ձևերի զարգացում, ֆերմերային տնտեսությունների, ասոցիացիաների և բաժնետիրական ընկերությունների կազմակերպում և կայացում,

6) ագրոարդյունաբերական համալիրի բնագավառում բարեփոխումների իրականացմանը և սեփականաշնորհմանը վերաբերող խորհրդակցություններ և աջակցություն,

7) գիտական հետազոտություններ:

Համագործակցությունը կիրականացվի նաև այլ փոխհամաձայնեցված ուղղություններով, որոնք կապահովեն սույն Համաձայնագրի իրականացումը:

Հոդված 3

Կողմերը կաջակցեն ագրոարդյունաբերական համալիրի համար գյուղատնտեսական մթերքների և նյութատեխնիկական պաշարների փոխադարձ ներկրումների ուղղությամբ երկու պետությունների ձեռնարկատիրական կառույցների միջև անմիջական կապերի իրականացմանը:

Հոդված 4

Համագործակցությունը սույն Համաձայնագրի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ ձևերով.

1) գիտատեխնիկական և տնտեսական տեղեկատվության և գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակում, գիտաժողովների, սեմինարների և ցուցահանդեսների անցկացում,

2) բուսաբուծության, անասնաբուծության և վերամշակման արդյունաբերությունում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում,

3) սերմերի նմուշների, գյուղատնտեսական կենդանիների, տնկանյութի, մեքենաների և սարքավորումների փոխանակում՝ փորձարկումներ իրականացնելու համար,

4) գիտատեխնիկական և արտադրական կոոպերացիա, համատեղ ձեռնարկությունների, բաժնետիրական ընկերությունների ստեղծում, կոոպերացված արտադրությունների կազմակերպում, կոնկրետ գործընկերների միջև ուղղակի արտադրական կապեր,

5) մասնագետ-ստաժորների փոխանակում,

6) Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ համագործակցության այլ ձևեր:

Հոդված 5

Սերմերի նմուշների, տեխնիկայի, կենդանիների և այլ արտադրանքի, ինչպես նաև հրապարակված տեղեկատվության փոխանակում կիրականացվի մտավոր սեփականության բնագավառում Կողմերից յուրաքանչյուրի ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի արդյունավետ իրականացման նպատակներով Կողմերը պարբերաբար անց կկացնեն հանդիպումներ, ղեկավարների և մասնագետների մակարդակով համագործակցության առաջնային ուղղությունները որոշելու, համատեղ նախագծերի և ծրագրերի իրականացումը, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ խորհրդակցությունները համակարգելու համար:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցագրերի փոխանակման օրվանից և կգործի անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այն դադարեցնելու իր մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելուց վեց ամիս հետո:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվականի նոյեմբերի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:
Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի սեպտեմբերի 11-ից: